ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«10» հունիսի 2025 թ. N 65-Ա/1

ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝ խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց համար նախատեսված դասընթացի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը և «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ դասընթացներն անցկացնել առկա եղանակով՝ առաջնորդվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով:

3. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում՝ դասընթացի մասին հայտարարությունը (առանց խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց անձնական տվյալները հրապարակելու), ինչպես նաև 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով հաստատված խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց համար նախատեսված դասընթացի թեմաները և ուսումնական նյութերը տեղադրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքերում:

4. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց կենտրոնացված հաշվառման հերթականությամբ կազմված ցուցակները, ինչպես նաև այդ անձանց անձնագրերի/նույնականացման քարտերի պատճենները տրամադրել «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

5. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝

1) դասընթացն ավարտվելուց հետո մեկօրյա ժամկետում ներկայացնել դասընթացն ավարտած, որակավորված մասնակիցների ցանկը՝ դրանում ներառելով մասնակցի անունը, ազգանունը և անձնագրային տվյալները:

2) մինչև սույն թվականի հուլիսի 29-ը՝ ներկայացնել հաշվետվություն անցկացված դասընթացների վերաբերյալ՝ ներառելով մասնակիցների առաջարկությունները և գոհունակության գնահատման արդյունքները:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

7/10/2025

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2025 թվականի հուլիսի 10 N 65-Ա/Ն հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Խմբի համարը	Խմբում ընդգրկված ունկնդիրների թիվը	Դասընթացում ընդգրկված ունկնդիրների մշտական բնակության վայրը	Դասընթացի անցկացման եղանակը	Դասընթացի անցկացման ժամկետը	Դասընթացի ծավալը
1	14	1. Կոտայքի մարզ, 2 ունկնդիր 2. Երևան քաղաք, 2 ունկնդիր 3. Լոռու մարզ, 1 ունկնդիր 4. Արարատի մարզ, 7 ունկնդիր 5. Տավուշի մարզ, 2 ունկնդիր	առկա	14.07.2025-21.07.2025 Ժամը 10:00-15:00	48 ժամ